

## ՏԵՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆԱԽԱԳԱՅԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԻՋԵՎ



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին խորհրդատվություններ են սկսել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրվա նշանակման կապակցությամբ:

Ներին եւ քաղաքների ու մունիցիպալիտետների սակրեթուլոների անդամներին:

Այդ մասին հայտարարել է նախագահի մամուլ խոսնակ Էկա Միշվելաձեն: Հիշեցնենք, որ Վրաստանում տեղական ընտրություններն անցկացվելու են ընթացիկ տարվա աշնանը: Քաղաքացիներն ընտրելու են քաղաքապետներին, շրջանային վարչությունների ղեկավար-

Ընտրությունների օրը հայտարարելու է նախագահը, որից հետո այն հաստատվելու է կառավարության միստում: Ընտրությունների օրվա հայտարարումից անմիջապես հետո երկրում մեկնարկվելու է նախընտրական քարոզարշավը: Թեկնածուների գրանցումը կսկսվի ընտրություններից 57 օր շուտ:

## ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### «ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ ԶԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ ԿՐՃԱՏՈՒՄ»

Հունիսի 1-ին Վրաստանի կառավարությունը քննարկեց տեղական ինքնակառավարման մարմինների միավորման հարցը: Ինչպես հայտարարել է վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, վերոնշյալ փոփոխությունը նպաստում է ինքնակառավարման հեղինակության բարձրացմանն ու բարեփոխումների հաջող իրականացմանը:



Ինքնակառավարման բարեփոխումը դիմամիկ, կենդանի օրգանիզմ է, եւ ճշտումների անհրաժեշտության կարիք ունի, մասնավորապես, որ վերջին երեք տարվա ընթացքում պարզորոշ դարձան մի շարք թերացումներ, որոնք արգելակում են իրական ինքնակառավարման զարգացումը: Արդյունքում, 14 մունիցիպալիտետների միավոր-

մանք մենք հիմնում ենք յոթ նորերը, սակայն դրանց բյուջեները պահպանում ենք: Տեղական բյուջեները ոչ մի թերթիով չեն նվազեցվի: Փոփոխությունների իրականացման երկրորդ հիմնական պատճառն այն է, որ այդ շրջաններում ձեւավորվել էր երկիշխանություն, բազում հիմնախնդիրներ էին ծագում կատա-

րումների արդյունավետության առումով եւ կարգադրությունների պատճենավորման տեսանկյունից: Ուստի, ընդունվեց որոշում միավորել քաղաքների ու շրջանների ինքնակառավարման մարմինները,- ընդգծել է Կվիրիկաշվիլին:  
(Խորհրդարանի արտոնագրությունը՝ 2-րդ էջում)

## ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

### ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ԶԵՆ»



Գյուղատնտեսական նշանակության հողերի, որպես բացառիկ նշանակության ռեսուրսի նկատմամբ սեփականության իրավունքը կարող են ունենալ միայն Վրաստանի քաղաքացիները, Վրաստանի քաղաքացիների միավորումը, պետությունը եւ ինքնակառավարման միավորը: Այդ մասին երկրի կառավարության միստում հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Վարչապետի պարզաբանմամբ, կառավարող թիմը նախաձեռնությամբ ռավարության եւ խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչները: Ընդունեցին որոշում՝ Սահմանադրական հանձնաժողովին դիմել նախաձեռնությամբ, որպեսզի Սահմանադրությունում արվի գրանցում, ըստ որի՝ գյուղատնտեսական նշանակության հողերը չեն վաճառվի այն անձանց, ովքեր չունեն Վրաստանի քաղաքացիություն: Վերոնշյալ գրանցումը անմիջականորեն արձագանքում է ն պահանջներին, որոնք ներկայացնում է Վրաստանի քաղաքա-

դիմեց Սահմանադրական հանձնաժողովին, որպեսզի Սահմանադրության մեջ արվի գրանցում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի վաճառքի կապակցությամբ:  
- Կառավարող թիմում անցկացվեցին խորհրդատվություններ, որոնց մասնակցում էին կա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

### ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՇՆՈՒՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՐՅՈՎ

Հունիսի 7-ին երեւանում Վրաստանի եւ Հայաստանի արտգործնախարարությունների միջեւ տեղի են ունեցել դիվանագիտական խորհրդակցություններ՝ նախարարների տեղակալներ Դավիթ Դոնդուայի եւ Շավարշ Քոչարյանի մակարդակով:

Հայաստանի արտաքին գործերի նախարարության մամուլի, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի վարչության հարցազրույցում մեջ ասվում է. «Համ-



դիվանան անդրադարձ կատարվեց երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցերի լայն շրջանակի, երկու երկրների ղեկավարների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքին, նախաձեռնվեցին փոխգործակցության խորացման ու ամրապնդման հեռանկարները եւ այդ ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկա աշնանը երկու երկրների ԱԳ նախարարությունների միջեւ կազմակերպել քաղաքական խորհրդակցություններ եւ դելիմիտացիային վերաբերող հարցերի շուրջ քննարկումները»:

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ԵԿԵՂԵՅԱԿԱՆ-ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏՆՈՒՄ

ՎԻՐԱՆԱՅՈՒ ԹԵՍԻ ԱՍՏՆՈՐԳ ՎԱԳԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԱՆԱՍՏԱՆԵՆԸ ՎԵՐԵՆՏՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂՄ

Հունիսի 6-8-ը, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովը: Հունիսի 8-ին ընդառաջելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերին, ժողովի աշխատանքին մասնակցեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Ժողովին մասնակցում էին նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը, Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանը, Վիրահայոց թեմի հոգաբարձուների խորհրդի անդամ Արամ Սանոսյանը եւ Վիրահայոց թեմի Մշակույթի բաժնի տնօրեն Լևոն Հոփիյանը:

Հունիսի 7-ի միստում անցկացվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հոգեւոր ու աշխարհակազմակերպչական ընտրությունը: Ընդգծենք, որ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ են ընտրվել Սփյուռքի թեմերի 5 ղեկավար-

ներ, այդ թվում Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը: Նշենք, որ Սրբազանը արդեն տասնմեկ տարի է, ինչ համդիսանում է Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ԻՆՏԵՐՎՅՈՒՄ

### ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ԲՈՒՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԸ, ԱՆԿԱՄ ԱՉԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԻՅ, ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ԵՆ. . .»

- Մեր երկրի համար կենսականորեն նշանակալից է, որպեսզի եվրախնամաբան կուրսի բարեփոխումներն իրենց ազդեցությունն ունենան բոլոր քաղաքացիների կենսածնի վրա,- հայտարարել է Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին՝ եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրվելու թեմայով անցկացված հանդիպմանը:


«Բազմազգ Վրաստան» շարժման կազմակերպմամբ, հանդիպում անցկացվեց ՆԱՏՕ-ի դաշնակցային գրասենյակում: Սամցխե-Ջավախեթի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանների ֆերմերներին ու գործարարներին տե-

ղեկություն ներկայացվեց եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման արդյունքների եւ սպասելիքների մասին: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)



ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻԶԵ. «ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՀԱՍՐԵԿՆՈՒՄ ԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԹԻՄԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆԸ»




Վրաստանի խորհրդարանի ղեկավարությունը ստացել է սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովի նախնական եզրակացությունը: Ինչպես հայտարարեց խորհրդարանի խոսնակ, սահմանադրական հանձնաժողովի նախագահ Իրակլի Կոբախիձեն, Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացված հանձնարարականները հիմնականում համընկնում են կառավարող թիմի դիրքորոշմանը:

- Նախնական եզրակացության կապակցությամբ, մենք Վենետիկի հանձնաժողովին փոխանցեցինք մեր մեկնաբանությունները, որպեսզի վերջնականապես հստակեցվեն տեխնիկական որոշ թերացումներ պարունակող հարցեր: Դրա համար կպահանջվի երկու-երեք օր: Դրանից հետո, հանձնաժողովի փաստաթուղթը կներկայացվի ընդդիմադիր սուբյեկտներին, հայտարարելու է Կոբախիձեն: Վենետիկի հանձնաժողովի կողմից փոխանցված նախնական եզրակացություններում նշված է, որ հանձնաժողովը որոշում է սահմանադրության վերանայման ընթացիկ գործընթացը: Ընդհանուր

առմամբ, հանձնաժողովը գտնում է, որ անցկացվող բարեփոխումները կուժեղացնեն եւ կբարելավեն ժողովրդավարության մակարդակը, օրենքի գերակայությունն ու հիմնական իրավունքների սկզբունքների վրա հիմնված երկրում սահմանադրական կարգը: «Ընդհանուր առմամբ, իրականացվող բարեփոխումներն արժանի են դրական գնահատականի: Դրանով ավարտվում է Վրաստանի քաղաքական համակարգի վերլուցիան՝ ուղղված խորհրդարանական համակարգի հիմնմանը, եւ դա առաջընթաց քայլ է», - ասված է Վենետիկի հանձնաժողովի նախնական եզրակացությունում մեջ: Հանձնաժողովը որոշակի դիտողություններ է ներկայացրել նախագահի ոչ անմիջական ընտրության, ինչպես նաև ընտրությունների առաջարկված համակարգի ներդրման կապակցությամբ: Մասնավորապես, հանձնաժողովը գտնում է, որ նախագահի ոչ անմիջական ընտրական համակարգի ներդրումը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է եվրոպական չափորոշիչներին: Սակայն խորհրդարանում հարկ է միջոցներ ձեռնարկել պլուրալիզմի առավել ապահովման եւ զսպիչ ու հավասարակշռման համակարգերի ներդրման համար:

Վենետիկի հանձնաժողովն իր նախնական եզրակացությունում քննադատել է Վրաստանի իշխանությունների կողմից առաջարկված ընտրական համակարգը, ըստ որի՝ չբաշխված մանդատները լրիվությամբ անցնելու են հաղթող կուսակցությանը: Հանձնաժողովը երկրի իշխանություններին առաջարկել է ձեւակերպել մանդատների բաշխման այլ ձեւաչափ: Հանձնաժողովի նախնական հանձնարարականում որոշակի անհամաձայնություն է հայտնվել սահմանադրական հանձնաժողովի նախաձեռնության հետ կապված, ըստ որի՝ սահմանադրությունում ամուսնությունը ներկայացվում է որպես կնոջ եւ տղամարդու միջեւ ընտանիք կազմելու կամավոր միություն: Նշենք, որ սահմանադրական փոփոխությունների նախագծի հարցով, Վենետիկի հանձնաժողովի վերջնական եզրակացությունները հայտնի կդառնան մի քանի օր հետո: Միայն դրանից հետո, հանրությանը կներկայացվի սահմանադրական փոփոխությունների վերջնական տարբերակը:



ԻՐԱՆ

ԱՅՈՒՐԵԿՅԱԿԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԶՈՐԵՐՈՎ

13 մարտի 4-ի գիշերը ֆուրգոնը վրաերթի է ենթարկել հետիոտների՝ Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքի Լոնդոնյան կամրջի շրջանում: Ֆուրգոնը վարող չարագործները հասել են մինչև Բորո մարկետ շուկա, որտեղ դուրս են եկել ավտոմեքենայից եւ սկսել դանակներով հարձակվել անցորդների վրա: Ոստիկանությունը տեղի ունեցածը որակել է որպես ահաբեկչական գործողություն: Վերջին տվյալներով, յոթ մարդ զոհվել է, 48-ը՝ հոսպիտալացվել, նրանցից 21-ի վիճակը ծայրահեղ է: Հարձակվողները ոչնչացվել են ոստիկանության կողմից:

Չոհվածների մեջ են երկու օտարերկրացիներ՝ Ֆրանսիայի եւ Կանադայի քաղաքացիներ: Վիրավորների թվում կան ոստիկանության չորս աշխատակիցներ:

Մեծ Բրիտանիա ՅԵՐԹԱԿԱՆ ԱՅՈՒՐԵԿՅՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆՈՒՄ ՀՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՋՈՐԵՐՈՎ

ՄԵՏ ԲՐԻՏԱՆԻԱ

ՅԵՐԹԱԿԱՆ ԱՅՈՒՐԵԿՅՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆՈՒՄ

Ֆուրգոնի լույս 4-ի գիշերը ֆուրգոնը վրաերթի է ենթարկել հետիոտների՝ Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքի Լոնդոնյան կամրջի շրջանում: Ֆուրգոնը վարող չարագործները հասել են մինչև Բորո մարկետ շուկա, որտեղ դուրս են եկել ավտոմեքենայից եւ սկսել դանակներով հարձակվել անցորդների վրա: Ոստիկանությունը տեղի ունեցածը որակել է որպես ահաբեկչական գործողություն: Վերջին տվյալներով, յոթ մարդ զոհվել է, 48-ը՝ հոսպիտալացվել, նրանցից 21-ի վիճակը ծայրահեղ է: Հարձակվողները ոչնչացվել են ոստիկանության կողմից:

ՄԵՐԶՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ԽՉԵՑԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բահրեյնի Թագավորությունը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը եւ Արաբական Միացյալ Եմիրությունները խզում են դիվանագիտական հարաբերությունները Քաթարի հետ: Ինչպես նշված է հաղորդագրության մեջ, համապատասխան որոշումն ընդունվել է Քաթարի կողմից «Ալ Զախրա» եւ «Իսլամական պետություն» խմբավորումների գաղափարախոսության տարածման, Միւնայում ահաբեկչությունների աջակցման, տարածաշրջանի երկրների ներքին գործերին Քաթարի շարունակվող միջամտության կապակցությամբ, ինչը սպառնալիքի տակ է դնում արաբական երկրների ազգային անվտանգությունը եւ պառակտում սերմանում արաբական հասարակության մեջ:

Իր հերթին, Քաթարը չարդարացված է համարում Դոհայի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու արաբական չորս պետությունների որոշումը:

ԱՆՅԱՆՍ

ՄՈՆԻՏԵՆԳՐՈՆ՝ ՆԱՏՕ-Ի 29-ՐԴ ԱՆՊՈՒՄ

Մոնտենեգրոն դարձավ Հյուսիսատլանտյան դաշինքի 29-րդ անդամը: ՆԱՏՕ-ին երկրի անդամակցության պայմանագիրն ի պահ հանձնվեց ԱՄՆ պետքարտուղարությանը, ինչպես եւ նախատեսված է կազմակերպության հիմնադիր Վաշինգտոնի պայմանագրով:

ՆԱՏՕ-ի վերջին ընդլայնումը տեղի էր ունեցել 2009թ. ապրիլի 1-ին, երբ կազմակերպությանը միացել էին Ալբանիան եւ Խորվաթիան:

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՐԵՐԸ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ԶԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցիների մեծ մասը: Կարծում են, որ դա որոշում է, որն անպայմանորեն ընդունելու է կառավարող թիմը, - հայտարարեց վարչապետը: Նշենք, որ խորհրդարանական մեծամասնությունը մշակել է օրինականա-

խագիծ, ըստ որի՝ մորատորիումը առնչվում է օրենքի այն հոդվածներին, որոնք նախատեսում են օտարերկրյա քաղաքացիներին հողի վաճառքի հնարավորություն: Միաժամանակ, խորհրդարանական մեծամասնությունը ծրագրում է օրենսդիր մարմնից ետ դարձնել մոտ մեկ շաբաթ

առաջ ներկայացված օրինականախագիծը, որը նախատեսում էր օտարերկրացիներին վաճառվող հողի հարցերի կարգավորում: Գյուղատնտեսական նշանակության հողերի վաճառքի մորատորիումի հետ կապված նախագիծը խորհրդարանը քննարկելու է արագացված կարգով:

ԻՆՔՆԱԿԱՆՈՒՄ

ՀԻՆԳ ՔԱՂԱՔ ԿՊԱԶՊԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՆՈՒՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Վրաստանի խորհրդարանի նախաձեռնած օրինականախագիծը համաձայն, որը նախատեսում է ինքնակառավարման քաղաքների թվաքանակի կրճատում եւ յոթ ինքնակառավարման քաղաքների ու մունիցիպալիտետների միավորում, Վրաստանում ինքնակառավարման կարգավիճակով քաղաքների թիվը 12-ից կհասցվի հինգի:

Ինքնակառավարման քաղաքների կարգավիճակ պահպանում են Թբիլիսին, Ռուսթավին, Քուրայիսին, Փոթին եւ Բաթումին: Կառավարությունը ծրագրում է միավորել 14 մունիցիպալիտետներ եւ դրանցից հիմնել յոթը: Ախալցխեի քաղաքի եւ Ախալցխեի մունիցիպալիտետի միավորմամբ կհիմնվի Ախալցխեի մունիցիպալիտետը: Նման սկզբունքով կհիմնվեն Գորիի, Ամբրուլուրիի, Մցխեթայի, Օգուրգեթիի, Թելավիի եւ Ջուգ-

դիդի մունիցիպալիտետները: Այդ կապակցությամբ, տեղական ինքնակառավարման օրենսգրքում իրականացված փոփոխությունները կհանգեցնեն եւս քսան օրենքների փոփոխության: Օրինականախագիծը մշակվել է Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարարության կողմից:

Գյուղատնտեսական նշանակության հողերի վաճառքի մորատորիումի հետ կապված նախագիծը խորհրդարանը քննարկելու է արագացված կարգով:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՈՒԺԻ ՄԵՋ ԵՆ ՄՏՆՈՒՄ ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՐ ԿԱՐԳՎՈՐՈՒՄՆԵՐ

Հունիսի 1-ից ֆինանսական հատվածում ուժի մեջ են մտել սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանության նոր կարգավորումներ: Այդ մասին ասված է Վրաստանի Ազգային բանկի հաղորդագրության մեջ:

Համաձայն նոր կարգավորումների, եթե նախկինում պարտադիր էր բանկի ու ֆիզիկական անձանց միջև պայմանավորվածության կարեւորագույն տեղեկատվության նշումը, որը կապված էր բանկի վարկային կամ 300-ից մինչեւ 50 հազար լարիի դեպոզիտ սպասարկման հետ, ապա, հունիսի 1-ից դա կվերաբերի նաեւ իրավաբանական անձանց: Պայմանագրային գումարը մինչեւ 200 հազար լարի հասցնելու դեպքում, նաեւ սահմանվում է բանկային պայմանագրերում նվազագույն թույլատրելի տուգանքի չափ: Ինչպես պարզաբանեցին Ազգային բանկում, տուգանքի չափը սահմանվում է նրա համար, որպեսզի խուսափեն պայմանագրին ժանդախելու ժամանակ առաջացող լրացու-

ցիչ խոչընդոտներից: Ֆինանսական կազմակերպությունները պարտավոր են որոշակի հաջողակաճությանը սպառողներին ներկայացնել տեղեկանք բանկերից, եւ պայմանագրի պատճենը արդեն իսկ ներկայացված սպասարկումների հարցով: Նաեւ ֆինանսական կազմակերպությունները, պարտավոր են պարտավորեցումների ժամկետանցման, ինչպես նաեւ բանկի կողմից ցանկացած սպասարկման ընդհատման դեպքում, տեղեկացնել սպառողին ու երաշխավորին՝ պարտավորությունների ժամկետանցման մասին դրանից առնվազն հինգ աշխատանքային օր հետո: Նախկինում վճարման ժամկետանցման մասին տեղեկատվության հանձնումը կախված էր միայն բանկից: Բացի այդ, Ազ-

գային բանկի որոշմամբ, ֆինանսական կազմակերպությունները կդադարեցնեն կոմիսիոն սակագների առգրավումը այն սպասարկումներից, որից սպառողներն օգտվում են մեկ տարուց ավելի: Բացի այդ, վարկի գումարի 20 տոկոսը մարելու դեպքում, եթե գումարը կազմում է առնվազն 500 լարի, ֆինանսական կազմակերպությունները պարտավոր են սպառողներին ներկայացնել պարտքի մարման այլընտրական ժամանակացույցի երկու նոր տարբերակները:





Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-Ն ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍԱՆԻ ՆԱԽԱԶԵՌՆԱԾ ԲԱՆԱԶԵՎԸ

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան, Նյու Յորքում անցկացված իր 71-րդ նստաշրջանում, հերթական անգամ ընդունեց Վրաստանի կողմից նախաձեռնած Վրաստանի բռնազավթված տարածքներում բռնազաղթված անձանց եւ փախստականների մասին բանաձեռն: Բանաձեռնը պաշտպանեցին 80 երկրներ, 14-ը՝ դեմ քվեարկեցին, իսկ 61-ը՝ ձեռնպահ մնացին: Նշենք, որ նախորդ տարվա համեմատությամբ, բանաձեռնը պաշտպանող երկրների թիվը ավելացել է: Անցյալ տարի, հոգուտ բանաձեռնի, քվեարկել էր 76 երկիր, դեմ՝ 15, ձեռնպահ էր մնացել 64 պետություն:

Մի բռնազավթված տարածքներում բռնազաղթված անձանց եւ փախստականների մասին բանաձեռն: Բանաձեռնը պաշտպանեցին 80 երկրներ, 14-ը՝ դեմ քվեարկեցին, իսկ 61-ը՝ ձեռնպահ մնացին: Նշենք, որ նախորդ տարվա համեմատությամբ, բանաձեռնը պաշտպանող երկրների թիվը ավելացել է: Անցյալ տարի, հոգուտ բանաձեռնի, քվեարկել էր 76 երկիր, դեմ՝ 15, ձեռնպահ էր մնացել 64 պետություն:

որ նախորդ տարվա համեմատությամբ, բանաձեռնը պաշտպանող երկրների թիվը ավելացել է: Անցյալ տարի, հոգուտ բանաձեռնի, քվեարկել էր 76 երկիր, դեմ՝ 15, ձեռնպահ էր մնացել 64 պետություն:



ԳԻՐԳԻ ԹՎԱՌԻՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«Թայմերի» տեղեկատվությամբ, ֆինանսների նախարարության քննչական ծառայության պետ է նշանակվել Գիրգի Թվաուրին, ով մինչ այդ գլխավորում էր Լեւան Սամխարաուլու անվան փորձագիտական բյուրոն:

Պիլեցեցեց, որ վերջին մի քանի օրվա ընթացքում, ֆինանսների նախարարության քննչական ծառայությունից պաշտոնաթող եղան մի քանի պաշտոնյաներ, որոնց թվում էր նաեւ ծառայության ղեկավար Գիրգի Բադաշվիլին, որը արդեն նշանակվել է գլխավոր դատախազի տեղակալ:

ՆԿԱԳԱՐԱԿԱՆ ԹՈՒՅ «ՌՈՒՍՎԻՉ-2»-Ի ՂԵՂԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԼԱՆՈՒՆԸ

Յունիսի 9-ին հայտնի դարձավ, որ «Ռուսթավի-2»-ի հեռուստատեսության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիան պաշտոնաթող է եղել: Մի քանի օր առաջ նա հայտարարել էր, որ եթե մինչեւ սեպտեմբեր չկարողանա կարգավորել հեռուստաընկերության ֆինանսական հիմնախնդիրները, ապա պաշտոնաթող կլինի:

Ինչպես տեղեկացրին հեռուստաընկերությունում, «Ռուսթավի 2»-ի գլխավոր տնօրենի պաշտոնը, հավանաբար, կզբաղեցնի Կոբա Նաղդիփան: Թեպետ նրա նշանակման դեպքում, վերջինս ստիպված է լինելու իրաժարվել Վրաստանի խորհրդարանի «Ազգային շարժման» համամասնական ցուցակով ստացված պատգամավորական մանդատից: Նրա փոխարեն խորհրդարանում տեղ կզբաղեցնի Նինո Կալանդաձեն:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՆ ԿՈՒՐՍ (9 ՅՈՒՆԻՍԻ)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեյալ կուրսը.

Table with 3 columns: Currency, Buy rate, Sell rate. Rows include AMD, EUR, USD, RUB, GEL.

Յունիսի 2-ի համեմատ, դոլարի կուրսը նվազել է 0.003 լարիով:

ՈԼՈՐՏ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՌԵՆԵՍԱՐ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունում անցկացվեց աշխատանքային հանդիպում, որի ընթացքում քննարկվեցին ֆերմերների ռենեսարի ստեղծման եւ այդ ռենեսարի ստեղծման ուղղությամբ գործողության ծրագրի կարգավիճակի հետ կապված հարցեր:



Աշխատանքային հանդիպմանը մասնակցեցին գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին, փոխնախարարներ, ՄԱԿ պարենամթերքի եւ գյուղատնտեսության կազմակերպության «Գյուղատնտեսության նախարարության հնարավորությունների զարգացման» նախագծի ներկայացուցիչներ եւ գինու ազգային գործակալության նախագահ Գիրգի Սամանաշվիլին:

րը պետք է ձեւակերպվի: Այդ ուղղությամբ գյուղատնտեսության նախարարությունն ակտիվորեն գործում է Եվրամիության եւ ՄԱԿ պարենամթերքի եւ գյուղատնտեսության կազմակերպության հետ: Յանդիպմանը վերոնշյալ միջազգային կազմակերպության ներկայացուցիչները խոսեցին Վրաստանում ռենեսարի զարգացման հեռանկարների մասին: Ընդգծվեց, որ հարկ է հաշվի առնել բոլոր գործոնները, որպեսզի ստացվի նորացվող ու թարմ տվյալներով տեղեկատվական բազա:

Հանդիպմանը նշվեց, որ ֆերմերների ռենեսարի կազմումը պետք է իրականացվի գյուղատնտեսական ոլորտում առկա իրական վիճակի եւ գերատեսչության նպատակների հաշվառմամբ: Ինչպես նշեց Լեւան Դավիթաշվիլին, Եվրամիության առջեւ ստանձնած պարտավորության համաձայն, 2018 թվականի համար Վրաստանում ֆերմերների ռենեսարի

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀՆԱՐԱՎՈՐ Է ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԵՎ ՋՐԻ ՍԱԿԱԳՆԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ



Բացառված չէ, որ Վրաստանում բնական գազի եւ ջրի սակագնի աճ գրանցվի: Սակագնի բարձրացման վերաբերյալ գազի ընկերությունների կողմից էներգետիկայի եւ ջրամատակարարման ազգային ընկերություն ներկայացված հայցին հնարավոր է միանա նաեւ ջրամատակարարման ընկերության կողմից ներկայացվող հայցը:

կազմերն են, ուստի եւ հաշվարկումից հետո հնարավոր կլինի կարգավորման համեմատողովին դիմել սակագնային քաղաքականությամբ վերանայման հարցով, հայտարարեց Վրաստանի ջրամատակարարման ընկերության կողմից ներկայացվող հայցը:

րարման միացյալ ընկերության տեխնիկական հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ Ջազա Սիխարուլիձեն:

Իր հերթին, «Ջորջիա վուտեր էնդ փաուեր» ընկերության օպերատիվ կառավարման ոլորտի տնօրեն Մամուկա Կիկալաշվիլին ասաց, որ սակագինը պետք է սահմանվի համապատասխան մակարդակով: Ինչ վերաբերում է բնական գազի սակագնին, ապա այդ հարցով հանձնաժողովը որոշում կընդունի հունիսի կեսերին:

ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ՝ ԲԱՐՁՐԱԼԵՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի կառավարությունը հաստատել է բարձրալեռ տարածաշրջաններում պետական սեփականության ներքո գտնվող խոտհարքների եւ արոտավայրերի ռացիոնալ օգտագործման պետական նոր ծրագիրը:

Պետական նոր ծրագրի շրջանակներում, բարձրալեռ տարածաշրջաններում գյուղատնտեսական կոոպերատիվները, խոտհարքներն ու արոտավայրերը 25 տարի ժամկետով կտրվեն վարձակալությանը: Վարձակալության արժեքը առաջին եւ երկրորդ տարվա ընթացքում մեկ հեկտարի համար կկազմի մեկ

լարի, երրորդ եւ հաջորդ տարիների համար՝ 15 լարի: Մինչեւ արոտավայրերն ու խոտհարքները ճանապարհների կանցկացվեն: Դա իրականացնելու են ենթակառուցների նախարարությունն ու համապատասխան մունիցիպալիտետները:

Advertisement for 'ՎՐԱՍԱՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է' (Information and Technology of Georgia's First Public Procurement Agency). Includes logo, title, and a photo of officials.



ԿՐԱՍԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶԵԶԵԼԱՎԱ. «ԵՐԵՒԱՆԵՐԻՆ, ՈՒՄ ԳԻ ՀԱՅՐՈՎԵԼ ՀԱՆՁՆԵԼ ԱՏԵՏԱԶԻՈՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՐԶԱՆԻԿ ԱՊԱԳԱ Ե ՄՊԱՍՈՒՄ»



Ի ն չ պ ե ս հայտարարեց Կրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Զեզելավան, մասնագիտական կրթություն ստացած պատանիների աշխատանքով ապահովում է չորսը, իսկ մասնագիտական հաստատությունների 10 շրջանավարտներից 7-ը կարողանում է գտնել աշխատանք»,- հայտարարել է Ալեքսանդր Զեզելավան:

նը շատ ավելի էական է: «Երեւաններին, ում չի հաջողվել հանձնել ատեստացիոն քննությունները, երջանիկ ապագա է սպասում, քանի որ մասնագիտական կրթությամբ աշխատանքի ապահովումը շատ ավելի էական է: Ցանկանում են նշել, որ բարձրագույն կրթությամբ տասը անձանցից աշխատանքով ապահովվում է չորսը, իսկ մասնագիտական հաստատությունների 10 շրջանավարտներից 7-ը կարողանում է գտնել աշխատանք»,- հայտարարել է Ալեքսանդր Զեզելավան:

ԱՐՏԱՍԱՐՄԱՆՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ Ե ՀԱՅՏՆԵԼ ԿՐԱՍԱՆԻ 500 ՔԱՂԱՔԱՑԻ

Կրթական միջազգային կենտրոնում ավարտվեց 2017-2018 ուստարվա համար մագիստրատուրայի, դոկտորանտուրայի եւ արվեստի ծրագրերով կրթաթոշակի ստացման համար հայտերի ընդունումը: Ներկա դրությամբ, հայտարարված մրցույթի շրջանակներում, դիմում է ներկայացրել Կրաստանի շուրջ 500 քաղաքացի:

Նպատակային խումբ են համարվում այն քաղաքացիները, ովքեր սովորում են արտասահմանյան բուհերում: Բոլոր երեք ծրագրերը, որոնցում նրանք ընդգրկված են, նախատեսում է ուսման վարձի, ինչպես նաեւ արտասահմանում ապրելու ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցում: Մրցույթում հաղթելու համար դիմորդներն անցնելու են ընտրության երեք փուլ: Առաջին փուլում մրցութային հանձնաժողովը ստուգելու է զնահատելու է ներկայացված փաստաթղթերը: Փուլը հաղթահարելուց հետո, դի-

մումները քննարկելու է միջազգային ընկերական հանձնաժողովը: Այդ փուլում հանձնաժողովը գնահատելու է դիմումների բովանդակությունը, եւ համապատասխան միավորների ստացման դեպքում, մրցույթի մասնակիցն անցնում է երրորդ հարցազրույցների փուլը: Նշենք, որ կրթության միջազգային կենտրոնը 2014-2017 թվականների ընթացքում, արտասահմանյան բուհերում սովորելու համար կրթաթոշակներ է հանձնել Կրաստանի 341 քաղաքացիների:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Ե ՈՒՍՈՒՅԻՅՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ



Կրաստանի քննությունների եւ ազգային կենտրոնի կայք-էջում հրապարակվել է այն քննությունների ժամանակացույցը, որը երկրի մանկավարժները հանձնելու են այս կամ այն առարկայում իրենց իրավասությունների հաստատման համար:

Առարկայի, ինչպես նաեւ մասնագիտական ունակությունների քննությունը հանձնելու են ոչ միայն գործող ուսուցիչները, այլեւ՝ նրանք, ովքեր մտադիր են սկսել մանկավարժական գործունեությունը: Անցյալ տարի Կրաստանի մանկավարժների 20 տոկոսը կարողացավ հաջողությամբ հանձնել առարկայական քննությունը: Իմացության քննության համար գրանցված 17 հազար մանկավարժներից՝ անցյալ տարի իրենց իրավասությունը կարողացան ապացուցել միայն 340-ը: Գործող ուսուցիչների համար քննություններն անվճար են, իսկ նրանք, ովքեր մտադիր են զբաղվել մանկավարժությամբ, քննություններին գրանցվելու համար պետք է վճարեն 50 լարի:

Առաջին քննությունը վրաց լեզվի եւ գրականության, մաթեմատիկայի եւ բնագիտության (1-4-րդ դասարան), վրաց լեզվի եւ գրականության (1-6-րդ դասարան), բնագիտության (1-6-րդ դասարան) ուսուցիչները հանձնելու են հուլիսի 13-ին: Առաջինից չորրորդ դասարանի մաթեմատիկայի ուսուցիչների քննությունը կանցկացվի հուլիսի 14-ին: Այդ օրը քննություն կհանձնեն նաեւ 7-րդ, 12-րդ դասարանի վրաց լեզվի եւ գրականության, քաղաքացիական կրթության եւ ֆիզիկայի ուսուցիչները: Հուլիսի 18-19-ը ուսուցիչները կհանձնեն մասնագիտական ունակությունների քննություններ: 7-12-րդ դասարանների մաթեմատիկայի, ինչպես նաեւ պատ-

մության, կենսաբանության, աշխարհագրության ուսուցիչների քննությունը կանցկացվի հուլիսի 20-ին: Հուլիսի 21-ին կանցկացվեն անգլերենի, ռուսերենի, գերմաներենի, ֆրանսերենի, ինչպես նաեւ որպես երկրորդ լեզու վրացերենի գրավոր քննությունները: Նույն օրը կանցկացվեն տեղեկատվության եւ հաղորդակցական տեխնոլոգիաների քննությունները: Անգլերենի, ռուսերենի, գերմաներենի, ֆրանսերենի, որպես երկրորդ լեզու վրացերենի, ինչպես նաեւ տեղեկատվության ու հաղորդակցական քննությունների գործնական հատվածը կհանձնեն հուլիսի 22-23-ին: Քիմիայի, կիրառական եւ գեղարվեստի, սպորտի եւ երաժշտության քննությունները կանցկացվեն հուլիսի 24-ին:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Ե ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ



Կրաստանի քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնի կայք-էջում հրապարակվել է միասնական ազգային քննությունների ժամանակացույցը: Քննությունները կմեկնարկեն հուլիսի 3-ին:

Այս տարի միասնական ազգային քննությունների համար գրանցվել է 41,2 հազար դիմորդ: Նշենք, որ 2016-ին գրանցված դիմորդների թիվը կազմում էր 38,5 հազար: Միասնական ազգային քննությունները այս տարի կավարտվեն հուլիսի 27-ին: Ուսանող դառնալու համար անհրաժեշտ է հանձնել երեք պարտադիր առարկաներ՝ ընդհանուր ունակություններ, վրաց լեզու եւ գրականություն, օտար լեզու, եւս մի քննություն՝ ընտրությամբ: Հուլիսի 3-ին է 4-ին կանցկացվեն վրաց լեզվի եւ գրականության քննությունը, հուլիսի 6-7-ին ընդհանուր ունակությունների քննությունը: Հուլիսի 10-11-ին՝ օտար լեզվի (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն) քննությունը: Հուլիսի 12-ին կանցկացվեն աշխարհագրության, հուլիսի 13-ին՝ մաթեմատիկայի, հուլիսի 14-ին՝ գրականության, հուլիսի 17-ին՝ պատմության, հուլիսի 18-ին՝ կենսաբանության, հուլիսի 19-ին՝ քիմիայի, հու-

լիսի 25-ին քաղաքացիական կրթության, հուլիսի 26-ին՝ ֆիզիկայի, հուլիսի 27-ին՝ կիրառական եւ գեղարվեստի քննությունները: Կախված միասնական ազգային քննությունների արդյունքներից, դիմորդները կարող են ստանալ բուհում ուսման վարձի 100, 70 կամ 50 տոկոսի պետական ֆինանսավորումը: Բացի այդ, հուլիսի 27-ին կանցկացվի դրամաշնորհային մրցույթ ուսանողների համար: Ցանկացած ուսանող կարող է ստանալ պետական ֆինանսավորում կամ բարձրացնել ֆինանսավորման տոկոսը՝ հանձնելով ընդհանուր ունակությունների քննությունը: Կրաստանում միասնական ազգային քննությունների անցկացման համար կբացվեն քննական 23 կենտրոններ: Դիմորդները հարցերը կստանան էլեկտրոնային տարբերակով, սակայն կպատասխանեն գրավոր: **Խորագրի նյութերը՝ ԱՐԵՎԻԿ ԱՆՈՒԿՅԱՆԻ**

լիսի 25-ին քաղաքացիական կրթության, հուլիսի 26-ին՝ ֆիզիկայի, հուլիսի 27-ին՝ կիրառական եւ գեղարվեստի քննությունները: Կախված միասնական ազգային քննությունների արդյունքներից, դիմորդները կարող են ստանալ բուհում ուսման վարձի 100, 70 կամ 50 տոկոսի պետական ֆինանսավորումը: Բացի այդ, հուլիսի 27-ին կանցկացվի դրամաշնորհային մրցույթ ուսանողների համար: Ցանկացած ուսանող կարող է ստանալ պետական ֆինանսավորում կամ բարձրացնել ֆինանսավորման տոկոսը՝ հանձնելով ընդհանուր ունակությունների քննությունը: Կրաստանում միասնական ազգային քննությունների անցկացման համար կբացվեն քննական 23 կենտրոններ: Դիմորդները հարցերը կստանան էլեկտրոնային տարբերակով, սակայն կպատասխանեն գրավոր: **Խորագրի նյութերը՝ ԱՐԵՎԻԿ ԱՆՈՒԿՅԱՆԻ**

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

TBC ԼԻԶԻՆԳԻ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՍՏԱՐՏՈ ՆԱԽԱԳԻԾԸ



Ստարտոն TBC լիզինգի նոր ծառայությունն է, որը ֆիզիկական անձանց հնարավորություն է ընձեռում՝ առանց տանից դուրս գալու, օնլայն դիմումը լրացնելով, գնել օգտագործված ավտոմեքենաներ: Ստարտոն բացառիկ ծառայություն է, քանի որ լրիվությամբ նպատակաուղղված է սպառողների հարմարավետության ապահովմանը: Սեքենա գնել ցանկացողները կազատվեն գրասենյակ այցելելու, խորհրդատվություններ անցնելու եւ որոշումն ընդունելու գործընթացի սպասումներից: Ստարտոնի միջոցով այդ ամենն օնլայն կարգով իրականացվում է կարճ ժամանակամիջոցում:



Դրա համար անհրաժեշտ է ընտրել ցանկալի մեքենան ու լրացնել օնլայն պարզեցված դիմումը ստարտոնի [www.starto.ge](http://www.starto.ge) կայք-էջում (եթե մեքենան գրանցված է որեւէ կայք-էջում, ապա սպառողը կարող է պատճենահանել լինկը, նաեւ կարող է ուղարկել ցանկալի մեքենայի լուսանկարները): Մի քանի րոպեում ստարտոնի ներկայացուցիչը կկապվի սպառողի հետ, կտեղեկացնի ֆինանսավորման վերաբերյալ պատասխանը, կներկայացնի բոլոր մանրամասները եւ ձեզ համար կգնի ցանկալի մեքենան, որը լիզինգով կփոխանցվի օգտագործման համար: Դուք միայն մեկ անգամ պետք է ներկայանաք ստարտոնի գրասենյակ՝ պայմանագրի ձեւակերպման եւ ավտոմեքենայի գրանցման ընթացա-

կարգի համար: Ողջ գործընթացը տեւում է ընդամենը 30 րոպե: Եթե արդեն ունեք ավտոմեքենա, ապա կարող եք համաֆինանսավորում ստանալ դրա գրավարձման մասին եւ շարունակել օգտագործել մեքենան լիզինգի ժամկետի ընթացքում: Նրանք, ովքեր արդեն օգտվում են ավտոլիզինգից կամ ավտովարկերից միկրոֆինանսական այլ կազմակերպություններում, կարող են ստարտոնում իրականացնել պորտիֆոլոյ: Ստարտոնի ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է լինել 21 եւ ավելի տարիքի, իսկ ավտոմեքենան պետք է գնահատվի առնվազն 2 հազար ԱՄՆ դոլար: Ստարտոնի ֆինանսավորում կարող են ստանալ բոլորը, եթե՝

- \* Ցանկանում եք գնել ավտոմեքենա եւ չունեք համապատասխան գումար, դուք կարող եք ստանալ մինչեւ 100 տոկոսանոց ֆինանսավորում,
- \* Արդեն ունեք ավտոմեքենա, եւ անհրաժեշտ է գումար, ապա, կարող եք ավտոմեքենայի գրավարձմամբ ստանալ դրա արժեքի 100 տոկոսը,
- \* Ցանկանում եք նորացնել խնայողական մեքենա, կարող եք ստանալ բացառիկ պայմաններ՝ հիբրիդային ավտոմեքենայի ձեռքբերման հարցում,
- \* Ձեր վարկային պատմությունը դրական չէ, մենք կքննարկենք դիմումը, եւ

աննշան պահանջների հաշվառմամբ, դուք կստանաք ֆինանսավորում: Ստարտոնում տարեկան տոկոսադրույքը բոլոր կոնկրետ ավտոմեքենաների եւ հաճախորդների համար անհատական է՝ կախված մի շարք գործոններից: Այդ թվում հաճախորդի վարկային պատմությունից, ավտոմեքենայի մակնիշից, շուկայական գնից եւ հաճախորդի կողմից համամասնակցության ծավալից: